ՆԵՐՔԻՆ ԽՆՁՈՐ (ԿԱՅԱԼԻ ԴԵՐԵ) ԱՄՐՈՑԸ

(Արևմտյան Հայաստանի ուրարտական ամրոցի մասին)

Պատմ. գիտ. դոկտոր Ս. Ա. ԵՍԱՅԱՆ, Լ. Վ. ԱԲԱՋՅԱՆ

Վանի թագավորության ուշագրավ հուշարձաններից մեկը՝ Ներքին Խընձոր (Կայալի դերե)[1] ամրոցը գտնվում է պատմական Հայաստանի Տուրուբերան աշխարհի Հերք գավառում, ժամանակակից Վարտո քաղաքից 16 կմ հարավ-արևելք, Արածանիի աջ ափին, այնտեղ, ուր գետը թեքվում է արևմուտքից հարավ՝ հոսելով դեպի Մշո դաշտը[2]։

Ամրոցի պեղումները կատարվել են 1964—65 թթ. ընթացքում պրոֆ. Ս. Լոյդի ղեկավարությամբ։ Պեղումներին մասնակցել են մի շարք ամերիկացի և անգլիացի գիտնականներ՝ պրոֆ. Ջ. Բարնեյը, պրոֆ. Մ. Վան Լունը, ճարտարապետ Ջ. Լոյդը։ Հատկապես մեծ է արշավախմբի պետի տեղակալ Ջ. Բարնեյի աշխատանքը, որը հրատարակել է պեղումների նախնական հաշվետվությունը, մեծ տեղ հատկացնելով հայտնաբերված հուշարձանների նկարագրությանը, որոնցից մենք օգտվում ենք, նշելով հրատարակությունը։ Սակայն Ջ. Բարնեյը նյութական մշակույթը ներկայացրել է շատ սեղմ, սահմանափակվելով նկարագրությամբ, առանց որևէ մեկնաբանության, որը և դժվարացնում է նյութերի ուսումնասիրությունը։

Երկու միջնաբերդերով ամրոցը կառուցված է եղել մոտավորապես 150 մ բարձրությամբ բլրի դարավանդների վրա, որտեղ նկատվում են պարիսպների և բնակելի շինությունների հետքեր։

Վերին միջնաբերդը զբաղեցնում է բլրի գագաթն ու լանջերը։ Ստորին միջնաբերդը ձգվում է մինչև գետը։ Երկու միջնաբերդերը միանում են սալապատ ճանապարհով։ Քաղաքային թաղամասերը զբաղեցրել են բլրի ստորոտը և շրջակա տարածքը։ Ամբողջ համալիրը ունեցել է մոտավորապես 40 հա տարածություն։

Ճանապարհի վրա, Վերին միջնաբերդի մոտ բացվել են աշտարակներով և որմնահեցերով ամրացված դարբասների հետքեր, որտեղ գտնվել են մի քանի սյունախարիսխներ, նման Ալթին թեփեի բակում գտնված խարիսխներին[3]։

Վերին միջնաբերդի ամենաբարձր կետում բացվել է ամրոցի տաճարը։ Այն ունի քառակուսի հատակագիծ արտաքին 12,5×12,5 չափերով։ Պատերի հաստությունը տատանվում է 3,2—3,3 մ։ Անկյունային որմնահեցերը պատերից առաջանում են 0,4—0,5 մ։ Պահպանվել է 2—2,1 մ լայնությամբ մուտքը։ Ցելան 5,5×5,5 մ է, խորքում պահպանված է լավ թրծած աղյուսե հատակ (որի վրա ըստ երևույթին եղել են քարե սալիկներ) և քանդված քա-

---

[1] C. A. Burney. A first season of Excavations at Urartian Citadel of Kayalidere.—Anatolian Studies, vol XVI, Ankara 1966, pp. 55—111.

[2] Ամրոցի բիայնական անվանումը հայտնի չէ։ Հնագիտական գրականության մեջ այն հայտնի է Կայալի դերե, մոտակայքում գտնվող համանուն գյուղի անունով։ Գյուղի հայկական անունը Ներքին Խնձոր է և մենք վերականգնելով այն, այդպես էլ կանվանենք ամրոցը։ Օգտվելով առիթից, մենք շնորհակալություն ենք հայտնում Թ. Հ. Հարությունյանին՝ գյուղի հայկական անունը ճշտելու համար։

[3] C. A. Burney. Op. cit., p. 66.

րե պատվանդանի հետքեր։ Դատելով պատերի հաստությունից տաճարն ըստ երևույթին ներկայացրել է բարձր աշտարակաձև շինություն։ Պատերը պահպանվել են փոքր բարձրությամբ (2,6 մ). այնուհանդերձ թափված կարմիր աղյուսները վկայում են, որ տաճարը կառուցված է եղել աղյուսից, քարե հիմնապատի վրա։ Որոշ աղյուսների վրա պահպանվել են կապույտ գույնով ներկած սվաղի հետքեր[4]։ Բիայնական մոնումենտալ արվեստում որմնանկարները լայն տարածում են ունեցել։ Ներքին Խնձորի տաճարը նույնպես զարդարված է եղել որմնանկարներով։ Լավագույն պահպանված որմնանկարներ հայտնի են Էրեբունիում[5] և Ալթին Թեփեում[6]։

Տաճարի առջև բացվել են ընդարձակ սալապատ բակի հետքեր։ Տաճարի դիմաց, մուտքի առանցքի ուղղությամբ, գտնվել է ուղղանկյուն, 2 մ երկարությամբ, 1,35 մ լայնությամբ և 0,6 մ բարձրությամբ քարե կառույց։ Նրա վերին հատվածում պահպանվել է 4 սմ լայնությամբ փորագիր քիվ։ Կառույցը եղել է կամ ավազան՝ ծիսական արարողությունների համար, կամ խարիսխ, որի կենտրոնական խոր մասում դրվել է կոթող։ Տաճարի և բակի հատակի սալերի առանձին հատվածների վրա պահպանվել են սվաղի հետքեր։

Թոփրակ կալեի[7], Ալթին Թեփեի[8], Ազնավուր Թեփեի[9], Հայկաբերդի[10], Բաստամի[11], Վերահրամի[12] բիայնական տաճարների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանք, ինչպես և Ներքին Խնձորի տաճարը, ունեն միևնույն հատակագծային կառուցվածքը՝ փոքր ցելներ (5×5 մ, 4,5×4,5 մ, 5,2×5,2 մ, 5,8×5,8 մ) զոհասեղանով կամ արձանի համար պատվանդանով, չորս որմնահեցեր, պատերի գրեթե նույն հաստությունը (3,2, 3,3 մ), քարով կամ աղյուսով սալապատ բակ, կից զոհասեղաններ կամ շինություններ։

Ինչ վերաբերում է տանիքներին, ապա Ջ. Բարնեյը ենթադրում է, որ բիայնական տաճարների տանիքները, ի բացառյալ Արին բերդի տաճարներինը, եղել են երկթեք։ Նա ենթադրում է, որ Ներքին Խնձորի տաճարի տանիքը նման է Պասարգադեում հայտնաբերված Կյուրոսի դամբարանի տանիքին, տարբերվելով նրանից միայն փայտե ծածկով[13]։

Սակայն այս ենթադրությունը թվում է քիչ հավանական, քանի որ բիայնական շինությունների մեծ մասի տանիքը եղել է հարթ։ Դրա մասին են վկայում ինչպես գրավոր աղբյուրները, այնպես էլ հնագիտական ուսումնասիրությունները[14]։ Վանի ժայռափոր շինություններում պարզ երևում են առաստաղի տակ կամ դռներից վեր տեղադրված, հարթ տանիքը ընդգծող օղակաձև, կլոր ելուստներ։ Շինություններից մի քանիսում երևում են հեծանային ծածկի հետքեր, ինչպես Կարմիր բլուրում, Արին բերդում և այլն։ Իսկ վերաբերում է երկթեք տանիքներին, ապա հնագիտական ուսումնասիրությունները, ոչ մի բիայնական կառույցում, բացի Մուսասիրի տաճարից, որն,

---

4 Նույն տեղում, էջ 74։

5 Կ. Լ. Զոհրաբյան. Էրեբունիի որմնանկարները. Երևան, 1973։

6 Tahsin Özgüç. Altıntepe I.—Türk Tarih Kurumu Basımevi, Ankara, 1966 p. 47.

7 R. D. Barnett. The Excavations of the British Museum at Toprak Kale near Van in Iraq. XII, 1950, p. 13.

8 T. Özgüç. Altıntepe I, p. 53.

9 Th. B. Forbes. Urartian Architecture.—BAR. International Series 170, 1983, p. 80.

10 Afif Erzen. Çavuştepe. Ankara, 1958, p. 7.

11 Th. B. Forbes. Op. cit., p. 76.

12 Նույն տեղում։

13 D. B. Stronach. Excavations at Pasargadae Iran II, 1961, fig. 1—2 (pp. 22—23), pl. Ia—b.

14 Б. Б. Пиотровский. Ванское царство. М., 1959, с. 207.

ի դեպ, ունեցել է ուղղանկյուն հատակագիծ, երկթեք տանիքի ակնառու հետքեր չեն գրանցել։

Վերին միջնաբերդի ստորին դարավանդի վրա հայտնաբերվել է 25 կարասներով պահեստային սենյակ։ Զ. Բարնեյը, դատելով շերտագրությունից կարծում է, որ պահեստային սենյակը եղել է նկուղային հարկում, որի վրա բարձրացել են բնակելի սենյակները[15]։ Այս կարասները 2,3-ով թաղված էին հողի մեջ, ինչպես Կարմիր բլուրում, Արգիշտիխինիլիում և այլ ամրոցներում։ Տաճարից ոչ հեռու գտնվել է ևս մի պահեստային սենյակ, հողի մեջ թաղված կարասներով։

Վերին ամրոցի ժայռի հարավային եզրին պահպանվել է մեկ հստակ ընդգծված մուտքով ժայռափոր դամբարան։ Մուտքից դեպի դամբարանի խորքը տանում է նեղ անցուղի և ավարտվում չորս աստիճաններով։ Դամբարանի ներսում կան երկու նեղ հորեր։

Առաջին սենյակի դուռը ծածկված է եղել երեք խոշոր բազալտե սալերով։ Հինգ խոշոր բազալտե սալեր են գտնվել երկրորդ սենյակի կենտրոնում։ Երրորդ սենյակում փոքր հարթակի վրա գտնվել է 1,5 մ երկարությամբ քարե սարկոֆագ։ Պատերի մեջ կամարաձև վերնամասով խորշեր կան, նման Ալթին թեփեի առաջին դամբարանի խորշերին[16]։ Խորշերից մեկում գտնվել է քարե թաս։ Հինգերորդ սենյակը հատակագծով նման է երրորդ սենյակին և նույնպես ունի ութ խորշեր։ Վեցերորդ սենյակի հատակին, բոլոր պատերի տակ փորված էին 36 կլոր փոսիկներ։

Այսպիսով, Ներքին Խնձոր ամրոցը մի հզոր շինություն է իր պալատական, տաճարային և դամբարանային համալիրով և մեծ նշանակություն ունի բիայնական ամրոցաշինության և քաղաքաշինության ուսումնասիրության գործում։

Ամրոցի պեղումներից հայտնաբերված հնագիտական իրերի ժողովածուն բաղկացած է աշխատանքային գործիքներից, զենքերից, կահույքի մասերից, զարդերից։

Աշխատանքային գործիքները ներկայացված են երկու իրով[17]։ Դրանցից մեկը ոչ մեծ՝ 21 սմ երկարությամբ և մինչև 2 սմ լայնությամբ, մեկ կողմից սրված երկաթե մանգաղ է, որը կարճ լեզվակով ամրանում է փայտե բռնակին (աղ. I, նկ. 2)։ Նման մանգաղներ հայտնի են Կարմիր բլուրից և Արգիշտիխինիլիից։

Երկրորդ աշխատանքային գործիքը երկաթե կացնի բեկոր է, որից պահպանվել է ձվաձև անցքով զանգվածեղ կոթառը և սայրի մի փոքր մասը։ Նման կացնի բեկոր հայտնի է Կարմիր բլուրից։ Այդպիսի կացիններ հայտնի են նաև Իգդիրի դամբարանադաշտերից։

Ավելի հարուստ են զենքերը։ Տաճարի տարածքում և դամբարանի առաջին սենյակում գտնվել են քսան երկաթե պոչուկավոր նետասլաքներ (աղ. I, նկ. 4, 5, 6)։ Նրանք տերևաձև և նշաձև են, կտրվածքում ձվաձև և շեղանկյուն։ Որոշ նետասլաքներ ունեն կենտրոնական ող։ Մի մասի պոչուկները հարթ են, մյուսների վերին մասում ուռուցիկ ելուստներ կան։ Նման նետասլաքներ հայտնի են Կարմիր բլուրից[18], Թուփրակ կալեից[19], Իգդիրից[20], Հայկա-

---

[15] C. A. Burney. Op. cit., p. 91.

[16] Tahsin Özgüç. Altintepe II.—Türk Tarih Kurumu Besemevi, Ankara, 1969, p. 66.

[17] C. A. Burney. Op. cit. Ill. 182. 184.

[18] Б. Б. Пиотровский. Кармир блур I, Ереван, 1950, рис. 22.

[19] Б. Б. Пиотровский. История и культура Урарту. Ереван, 1944, рис. 49.

[20] Б. А. Куфтин. Урартский колумбарий у подошвы Арарата и куро-аракский неолит.—Вестник Гос. музея Грузии, XIII, Тбилиси, 1944. рис. 1—7.

բերդից[21], Ալթին Թեփեից[22]։

Տաճարի ներսում գտնվել է բրոնզե սկյութական նետասլաք (աղ. I, նկ. 7), որն ունի փոքր անցքով խողովակաձև կոթառ։ Այս նետասլաքի և նրան ուղեկցող նյութի հիման վրա Զ. Բարնեյը եզրակացնում է, որ ամրոցի վերին միջնաբերդը ավերվել է կիմմերների կողմից մ. թ. ա. VIII դարի վերջում կամ VII դարի սկզբում[23]։ Նման նռաթև նետասլաքներ հայտնի են Անդրկովկասի տարբեր հուշարձաններից՝ Արին բերդից, Կարմիր բլուրից, Դվինից, Ցրանգանոցից և թվագրվում են մ. թ. ա. VII—V դդ.[24]։ Հետևաբար, Ներքին Խնձորի տաճարից գտնված նետասլաքը դժվար է թվագրել մ. թ. ա. VIII դարով և վերագրել կիմմերական ցեղին։

Գտնվել են նաև սպառազենքի այլ նմուշներ։ Դրանցից մեկը 67 սմ տրամագծով բրոնզե վահան է (աղ. I, նկ. 8), կենտրոնական ուռուցիկ մասով և լայն ուղիղ եզրերով[25]։ Ներսի կողմից ամրացված են մեկ խոշոր և երկու փոքր բռնակներ։ Անդարդ կամ կենդանիների պատկերներով բրոնզե վահաններ հայտնի են բիայնական տարբեր հուշարձաններից։ Կարմիր բլուրի պեղումների ժամանակ գտնվել են 14 նման վահաններ Արգիշտի I-ի, Սարդուրի II-ի և Ռուսա II-ի արձանագրություններով[26]։ Գտնվել է նաև փայտե վահան 9,2 սմ բարձրությամբ ումբոներով, որից հեռանում են կիսակլոր երկաթե ձողեր, որոնք ամրանում էին փայտե վահանին՝ նրան տալով ավելի մեծ ամրություն (աղ. I, նկ. 1,3)։

Գտնվել են բրոնզե թիթեղներից պատրաստված հինգ կապարճներ[27] (աղ. I, նկ. 11) զարդարված բազմաթիվ ուռուցիկ գծերով։ Նրանց վերին եզրերը ծալված են, մի կողմը կաշվից է։ Ջողերին կան երկու օղակներ, որոնց ամրացվում էր կաշվե փոկ։

Կենցաղային մետաղյա իրերը երկուսն են։ Առաջինը բրոնզե, 0,3 մ տրամագծով կաթսայի բեկոր է, որն ունի դեպի վեր նեղացող ուսեր և փոքր-ինչ դուրս ճկված շուրթ։ Ուսերին պահպանվել են անցքեր՝ հավանաբար բռնակներ ամրացնելու համար։ Տնտեսական օգտագործման բրոնզե կաթսաներ հայտնի են նաև Կարմիր բլուրից և Արգիշտիխինիլիից։ Երկրորդ իրը ներկայացված է որպես երկաթե տապակ (աղ. I, նկ. 12)[28]։ Այն ունի 0,2 մ տրամագիծ, 0,5 մ խորություն և 0,1 մ երկարությամբ երկաթե պոչուկ, որին ամրացվել է փայտե բռնակ։ Սակայն ձևաբանական հատկանիշների վերլուծությունը ենթադրում է, որ սա պարզապես շերեփ է, որի բրոնզե օրինակները հայտնի են Հայաստանի ուշ բրոնզի-երկաթի դարաշրջանների հուշարձաններից՝ Լճաշենից[29], Արթիկից[30], Լոռի բերդից[31]։

Ներքին Խնձոր ամրոցի տաճարի տարածքից և Ա դամբարանից գտնվել են կահույքի մասեր և կահույքը զարդարող մի շարք իրեր, որոնց մեջ ամե-

---

21 Aflf Erzen. Çavuştepe, fig. 39.

22 Tahsin Özgüç. Altintepe I, fig. 10; Tahsin Özgüç. Altinlepe II, pl. XXXIV, fig. 1—6.

23 C. A. Burney. Op. cit., p. 79.

24 С. А. Есаян, М. Н. Погребова. Скифские памятники Закавказья. М., 1985, с. 64–65.

25 C. A. Burney. Op. cit., p. 96.

26 Б. Б. Пиотровский. Кармир блур III. Ереван, 1955, с. 269; Он же. Ванское царство, с. 168; Он же. Искусство Урарту. Л., 1962, с. 26.

27 C. A. Burney. Op. cit., p. 94, fil. 18₃.

28 Նույն տեղում, էջ 108։

29 А. О. Мнацаканян. Лчашенские курганы.—Краткие сообщения Института археологии АН СССР, 1961, вып. 85, рис. 24.

30 Т. С. Хачатрян. Древняя культура Ширака. Ереван, 1975, с. 218, рис. 130.

31 Ս. Ա. Եսայան. Հայաստանի բրոնզեդարյան մետաղյա սպասքը.—«Լրաբեր հաս. գիտ.», 1987, № 2, էջ 65։

նամեծ խումբն են կազմում աթոռների կամ սեղանների փայտյա ոտքերին հագցվող բրոնզե ծայրակալները։ Սրանք բաժանվում են չորս տիպի։

Առաջին տիպին են պատկանում ոչ բարձր, կիսակլոր, սնամեջ, բրոնզե չորս ոտքեր, որոնք հավանաբար պատկանել են աթոռի կամ սեղանի[32]։



Աղ. I

Երկրորդ տիպը ներքևում հարթ, դեպի վեր լայնացող կողերով սնամեջ ոտք է։ Գտնվել է միայն մեկ օրինակ[33]։ Այսօրինակ ոտքեր գտնվել են նաև Թոփրակ կալեում և Ալթին թեփեում։

[32] C. A. Burney. Op. Cit., p. 100, Ill. 21.

[33] Նույն տեղում, էջ 100, աղ. XX, նկ. 21_2։

Երրորդ տիպին են պատկանում ցուլի ոտքերի ձևով երեք բրոնզե ծայրակալներ[34] (աղ. II, նկ. 6)։ Դրանք իրար են միանում մեկական սոնակալով։ Ըստ Զ. Բարնեյի ենթադրության սրանք եղել են եռոտանու ոտքեր։ Այս կարծիքի հետ դժվար է համաձայնվել, որովհետև այդ դեպքում նրանցից ամեն մեկը պետք է ունենար ոչ թե մեկ, այլ երկու տարբեր կողմեր ուղղված սոնակալ։ Բացի դրանից, թե՛ ոտքերի և թե՛ սոնակալների մեջ պահպանվել են փայտի հետքեր, հետևաբար նրանք հագցվել են փայտե ոտքերին։ Այս տիպի ոտքեր գտնվել են Գիիմլիից, Ալթին թեփեից, Կարմիր բլուրից։

Չորրորդ տիպի երեք նմուշները պատրաստված են առյուծի թաթերի ձևով (աղ. II, նկ. 3)[35]։ Սրանք կարճ են, սնամեջ, առջևում կլորավուն բացվածքներով, ձևավորված ուռուցիկ ճանկերով։ Սրանց նմանակները կան Թուվրակ կալեում[36], Ալթին թեփեում[37], Կարմիր բլուրում[38]։ Բացի բրոնզե ոտքերից Ներքին Խնձորի տաճարի տարածքում գտնվել են կահույքը զարդարող բրոնզե ղույգ պարույրներ (աղ. II, նկ. 8)[39]։ Տաճարի տարածքում երկու և պահեստային սենյակում գտնված չորս պարույրները միաձույլ են, բայց հոծ չեն։ Սնամեջ մասով նրանք հագցվում էին կահույքի ոտքերը միացնող սոնակալներին։ Ա դամբարանի առաջին սենյակում նույնպես գտնվել են երկու պարույրներ, որոնք տարբերվում են վերը նշվածներից պատրաստման եղանակով։ Սրանց երկու մասերը ձուլվել են առանձին և հետո միացվել երկաթե շերտաձողերով (աղ. II, նկ. 7)[40]։ Այդպիսի պարույրներ գտնվել են Ալթին թեփեում[41]։ Ասորեստանյան բարձրաքանդակներից մեկում Աշուրնասիրպալ II-ի աթոռի խաչաձևվող սոնակալները նույնպես զարդարված են նման պարույրներով[42]։

Համալիրի տարբեր մասերից գտնվել են կահույքի ոտքերը զարդարող, վատ պահպանված մի քանի տերևաձև իրեր (աղ. II, նկ. 4)[43]։ Սրանք զարդարել են կահույքի, եռոտանու ոտքերը սոնակալներից վեր և ձևավորված են ուռուցիկ, թափվող տերևների տեսքով։ Այդպիսի տարրեր կան Ալթին թեփեում[44] ցուլի և առյուծի բրոնզե ոտքերի վրա։ Թուվրակ կալեից գտնված և Ռ. Բարնետի կողմից վերականգնված գահի և աթոռակի ոտքերին կան այդպիսի տարրեր[45]։ Քույումջիկի բարձրաքանդակի վրա պատկերված Աշուրնասիրպալի աթոռը նույնպես զարդարված է թափվող տերևների շարքով[46]։ Նման զարդ հայտնի է նաև Կարմիր բլուրում պեղված բրոնզե աթոռի ոտքերի վրա։ Առանձին խումբ են կազմում աթոռի թիկնակները (աղ. I, նկ. 9)[47]։ Գտնվել են երկու նմուշ։ Սրանք ներքևում հարթ են, վերևի մասում կոր,

---

34 Նույն տեղում, աղ. XIX, նկ. 20_1։

35 Նույն տեղում, էջ 98, աղ. XIX c, նկ. 20_2։

36 R. D. Barnett. Iraq, XII, 1950, pl. III—IV.

37 T. Özgüç. Excavations at Altintepe.—Belleten 98, 1961, p. 271 and fig. 9 (p. 284).

38 Б. Б. Пиотровский. Кармир блур (альбом). Л., 1970, рис. 77.

39 C. A. Burney. Op. cit., p. 100, ill. 21_5, tab. XXIc.

40 Նույն տեղում, նկ. 23_1, աղ. XXV_2։

41 R. D. Barnett. Anatolian Studies III, 1953, pl. XVI 3—5; Belleten 98, 1961, p. 283, fig. 8.

42 H. Frankfort. Art and Architecture of the Ancient Orient Harmord Worth, 195 . pl. 89.

43 C. A. Burney. Op. cit., p. 98, tab. XXa, ill. 20_3.

44 T. Özgüç. Excavations at Altintepe, fig. 8—9, p. 283—4.

45 R. D. Barnett. Iraq XII (1950), pl. III—IV.

46 H. Frankfort. Op. cit., p. 114.

47 C. A. Burney. Op. cit., p. 100, tabl. XXe, ill. 21_4.

երկու կողմում ելուստներով։ Երկուսի մեջ էլ պահպանվել են փայտի մնացորդներ։ Հավանաբար բրոնզե ոտքերի նման սրանք նույնպես հագցվում էին թիկնաթոռների կամ գահերի փայտե թիկնակներին։



Աղ. II

Տաճարի տարածքում գտվել են մեծ գլխիկ ունեցող խոշոր դամեր՝ «ղիգատներ» (աղ. II, նկ. 10) և ավելի փոքր չքեղ դամ, որը հավանաբար ծառայել է զարդեր կախելու համար։

Զարդերից գտնվել են գլանաձև, տակառաձև և գնդաձև 18 հուլունք, պատրաստված շաղախից (մեկը ջնարակված), փղոսկրից և ագաթից։ Նման հու-

լունքներ գտնվել են Էրեբունիում, Արգիշտիխինիլիում, բայց զանգվածաբար գտնվել են Կարմիր բլուրում և Օշականում։ Դամբարանում գտնվել են նաև ապարանշան, արծաթե շքասեղ, արծաթե օղ, բրոնզե ասեղ (աղ. I, նկ. 10), բրոնզե փորագիր կոճակ (աղ. II, նկ. 5) և այլն։ Այս նյութերի մեջ առավել հետաքրքրական է արծաթե շքասեղը, որի գլխիկն ունի նռան ձև[48]։ Գլխիկի տակ կա փոքր օղ, որից կարելի է կախել տարբեր զարդեր։ Նման շքասեղներ գտնվել են Նոր Արեշից, Կարմիր բլուրից, Մեծամորից, Իգդիրից, որոնց գլխիկները զարդարված են թռչունների կամ կենդանիների փոքր քանդակներով։

Բիայնական արվեստի լավագույն նմուշներից է 6,4 սմ բարձրությամբ, 9,3 սմ երկարությամբ առյուծի ձուլածո արձանը[49] (աղ. II, նկ. 9)։ Առյուծը նստած է առջևի երկու թաթերը ձգված։ Վիզը կարճ է։ Գլուխը տրված է բոլոր մանրամասներով։ Բաշը ընդգծված է գծերով, ականջները սեղմված են գլխին։ Բաց երախում երևում են ժանիքները։ Առյուծի արձանը ստորին մասում կիսով չափ սնամեջ է, գլուխը և ոտքերը հոծ։ Նման առյուծներ են եղել Թոփրակ կալեի գահի և աշտանակի ոտքերի վրա[50]։ Առյուծի արձանին ավելի ստույգ համեմատական է Կ։սպանի շրջանի Սղնակ գյուղի օրինակը[51]։ Ի տարբերություն վերը նշվածի, այն քիչ ավելի մեծ է և հոծ։ Ե՛վ Ներքին Խնձորի, և՛ Սղնակի առյուծների արձանների ստորին մասում կան եռանկյուն փոսիկներ, որոնցով նրանք հագցվում էին ինչ-որ առարկայի կամ բռնակի, հանդիսանալով զինանշան։

Հետաքրքրական է որսի տեսարաններով զարդարված բրոնզե գոտու բեկորը[52] (աղ. II, նկ. 1)։ Պատկերված երեք մարտակառքերի թափքում կանգնած են երեքական զինվոր։ Զինված նետ-աղեղներով ու նիզակներով, նրանք պայքարում են առյուծների դեմ։ Առյուծներից մեկը սպանված ընկած է։ Մի առյուծ հարձակվում է թափքի վրա։ Մյուսը ատամներով բռնել է անիվը։ Առյուծներից մեկ ուրիշը, չնայած արդեն մահամերձ է, ճանկերը չի բացում և զինվորը ստիպված ձեռքով նրան պոկում է անիվից։ Բեկորի ձախ հատվածում պահպանվել է մի առյուծի գլուխը, աջում պատկերված է զինվորների վրա իջնող թռչուն և վերևից ընկնող մարտիկ։ Այս գոտին պատկանում է ռազմաորսորդական թեմա պատկերող գոտիների շարքին, որոնք հայտնի են Էրեբունիից, Բշնիից, Մեծամորից, Գուչիից, Ալթին Թեփեից, Թլիից գտնված և Ադանայի թանգարանում պահվող գոտիներից[53]։

Հետաքրքրական է նաև տաճարի բակում գտնված բրոնզե թիթեղի փոքր բեկորը 2,4×2,55 սմ չափերով, զարդարված ուռուցիկ թևավոր գրիֆոնի կամ թևավոր ձիու պատկերով։ Պահպանված բեկորի եզրերը ձևավորված են փոքր օղակներով (աղ. II, նկ. 2)[54]։

Չնայած ամենամասսայական նյութը խեցեղենն է, Զ. Բարնեյը Ներքին Խնձոր ամրոցի նյութը քննելիս սահմանափակվում է միայն խեցեղենի մի քանի նմուշների նկարագրությամբ։

Պեղված նյութերից համեմատաբար մեծ տեղ է հատկացված կարասներին, որոնք ունեն տարբեր ձևեր ու զարդամոտիվներ։ Գրեթե բոլոր կարասների վզին կամ շուրթի տակ կան հիերոգլիֆ նշաններ, որոնք ցույց են տալիս կարասի տարողությունը։ Բացի հիերոգլիֆ նշաններից կարասների վրա

---

48 Նույն տեղում, աղ. XI d։

49 Նույն տեղում, էջ 75, աղ. IX a, X a, b, c, նկ. 8. 9։

50 Նույն տեղում, էջ 77։

51 С. А. Есаян, Л. Н. Шагнинян. Археологические находки в Зангезуре.— Советская археология, 1962, № 3, с. 205, рис. 4.

52 C. A. Burney. Op. cit., p. 77, tabl. IX b. Ill. 10.

53 С. А. Есаян. Об урартских поясах, найденных в Советской Армении.— В сб.: Средняя Азия, Кавказ и зарубежный Восток. М., 1983, с. 33—34.

54 C. A. Burney. Op. cit, p. 79, Ill. 21_{17}.

պահպանվել են տիկի և սափորի պատկերներ, որոնք հավանաբար ցույց են տալիս, թե ինչ է պարունակում այս կամ այն կարասը։

Ելնելով ձևերից ու նախշերից, Զ. Բարնեյը կարասները բաժանում է վեց տիպի[55]։ Սակայն այս դասակարգումը մեր կարծիքով ստույգ չէ, որովհետև մի դեպքում նա հաշվի է առել միայն կարասի ձևը, մյուսում՝ միայն նախշը։ իսկ նախշը ընդհանուր է միաժամանակ մի քանի տիպի համար։ Մեր կար-



Աղ. III

ծիքով կարասները հիմնականում բաժանվում են չորս տիպի։ Առաջին տիպը դեպի վեր լայնացող իրանով, կարճ, նեղացող վզով, խոշոր, դուրս ճկված սրածայր շրթով կարասներն են (աղ. III, նկ. 1). Երկրորդ տիպի կարասներն ունեն ուռուցիկ իրան, կարճ վիզ և առաջինի նման հաստ, դուրս ճկված շուրթ (աղ. III, նկ. 3)։ Երրորդ տիպը ձգված իրանով (ստորին մասը չի պահպանվել), ուղիղ վզով և դուրս ճկված հաստ շրթով կարասներն են։

55 Նույն տեղում, էջ 85, 87. նկ. 15—16, աղ. XIV a, b, c., XV a։

Չորրորդ տիպի կարասներն ունեն կլորավուն իրան, կլորավուն փոքր-ինչ դուրս ճկված շուրթ, կարճ վիզ (աղ. III, նկ. 2)։

Պահպանված կարասների հատակները նեղ են և ունեն ոչ բարձր նըստուկ։ Այս կարասների բարձրությունը տատանվում է 1,75—2 մ և ունեն 1—1,3 մ լայնություն։

Առաջին երեք տիպերի որոշ կարասների վզից ներքև անցնում են ուռուցիկ բոլորանախշեր, երբեմն նեղ, ներճկված գծեր։ Մեծ մասի իրանները զարդարված են լայն ուղղանկյուններով և եռանկյուններով, որոնց գագաթները վեր ու վար են ուղղված։

Ինչ վերաբերում է չորրորդ տիպին, ապա նրա իրանը զարդարված է լայն, ուռուցիկ դոտիներով։ Բացի դրանից շուրթի տակից և իրանի կենտրոնից անցնում է ալիքաձև նախշ։

Կարասներն ունեն կարմրադարչնագույն մակերես և պատրաստված են լավ թրծած, ավազի հետ խառնված կավից։

Բացի կարասներից գտնվել է նաև մի գավաթ (աղ. III, նկ. 4)։ Այն ունի կարմրադարչնագույն երանգ, իրանի վրայով անցնում է նեղ կարմիր գոտի։ Հարկ է նշել, որ նման գավաթները բաժանվում են երկու խմբի։ Դրանց մի մասը իրանի վրա ունի սնամեջ բացվածքներ և, ինչպես ցույց են տալիս Կարմիր բլուրի նյութերը, ծառայել են իբրև ծխամաններ՝ կարասները ծծմբով ախտազերծելու համար[57]։ Նման անոթներ հայտնի են Արգիշտիխինիլիից, Էրեբունիից, Մեծամորից, Օշականից և այլ վայրերից։ Դրանց հետ մեկտեղ հանդիպում են գավաթներ, որոնք տարբերվում են վերոհիշյալ գավաթներից ավելի ուժեղ փայլով և չունեն նշված անցքերը։ Այս տիպի գավաթներ գտնըվել են վերոհիշյալ հուշարձաններում, ինչպես նաև Թոփրակ կալեում, Ալթին Թեփեում, Բաստամում։ Հ. Մարտիրոսյանի կարծիքով սրանք տեղադրվում էին եռոտանիների վրա և ունեին ծիսական նշանակություն։ Ինչպես երևում է ասորեստանյան բարձրաքանդակներից, այսպիսի անոթներում վառվում էր սրբազան կրակը[58]։

Մյուս անոթը կարմիր կավից պատրաստած, վատ թրծած ձագար է[59]։ Նման ձագարներ հայտնի են Կարմիր բլուրի պեղումներից։

Տաճարում գտնվել է խեցու բեկոր, որը պետք է թվագրել մ. թ. ա. VIII դարով։ Այն կարմրադարչնագույն է, վրան պատկերված է ձի։ Պահպանվել է միայն ձիու գլուխը[60] (աղ. III, նկ. 5)։

Խեցեղենի վրա պատկերված ձի է գտնվել Արգիշտիխինիլիից։ Սակայն կարևորը այստեղ ոչ թե պատկերն է, այլ խեցեղենի գույնը։ Մուգ փայլուն խեցեղենը ըստ Արգիշտիխինիլիի, Էրեբունիի, Երևանի բիայնական դամբարանի, Օշականի և Արամուսի ստորին շերտերի, բնորոշ է մ. թ. ա. VIII դարին։

Բացի վերոհիշյալ խեցեղենից Ներքին Խնձորում գտնվել են մի քանի կավե խողովակներ, որոնց երկարությունը 55,05 սմ է, լայն մասում ունեն 17,5, նեղ մասում՝ 12 սմ տրամագիծ[61]։ Սրանք Ջ. Բարնեյի կարծիքով ցամաքուրդային խողովակաշարի մի մասն են, որով օգտագործված ջուրը հեռացվել է ամրոցից[62]։

Ամրոցի թվագրությունը պարզաբանելու համար Ջ. Բարնեյը քննարկում է մի շարք հարցեր, որոնց մեջ գլխավոր տեղ է հատկացնում հատակագծերին։ Նա նշում է, որ պարիսպներով, որմնահեցերով և աշտարակներով ամրոցներ սկսել են կառուցվել մ. թ. ա. IX դարի վերջում և VIII դարի սկզբում և հե-

56 Նույն տեղում, էջ 85, աղ. XV b։

57 Б. Б. Пиотровский. Ванское царство, с. 189.

58 А. Л. Мартиросян. Аргиштихинили, Ереван, 1974, с. 148.

59 C. A. Burney. Op. cit., tabl. XVc.

60 Նույն տեղում, նկ. 21։

61 Նույն տեղում, էջ 81։

62 Նույն տեղում։

տևաբար, Ներքին Խնձոր ամրոցը կառուցվել է VIII դարի կեսից ոչ շուտ։ Ջնայած թվագրության ճշտությանը, որմնահեցերի և աշտարակների առկայությունը կամ բացակայությունը չի կարող կովան հանդիսանալ թվագրության համար։ Բացի դրանից, Սալամանսար III-ի Բալավատյան դռների վրա պահպանված բարձրաքանդակում պատկերված է Արամե թագավորի Սուգունիա քաղաքի գրավումը (մ. թ. ա. IX դարի կես), որտեղ պարզ պատկերված են հզոր աշտարակներ[63]։ Եվ այս հանգամանքը չի կարելի հաշվի չառնել։ Պետք է հաշվի առնել նաև, որ բիայնական ամրոցաշինությունը ծագում է ոչ թե մ. թ. ա. IX դարի վերջից և VIII դարի սկզբից, այլ ավելի վաղ շրջանից։ Ջ. Բարնեյի համոզմամբ[64], մինչև մ. թ. ա. IX դարը բիայնական ճարտարապետությունը կարող էր հանդես գալ միայն ոչ հզոր փայտաշեն շինություններով։ Սակայն հայտնի է, որ բիայնական ամրոցաշինությունը զարգացել է կիկլոպյան ճարտարապետության հիման վրա։ Բիայնական մի շարք հուշարձաններում՝ Հայկաբերդում, Կարմիր բլուրում, Էրեբունիում, Օշականում, Արամուսում, Արագածում, Բաստամում առկա են դարավանդներ, որոնք ամրացվել են պարիսպներով։ Հ. Օրբելին դեռ 1916 թ. գրում էր, որ խալդերի մոտ սովորություն է եղել արհեստական դարավանդների կառուցումը, որոնք պաշտպանվում էին մի շարք պարիսպներով[65]։ Կրկնելով այս դիտողությունը Կ. Հովհաննիսյանը նրանում տեսնում է տրամաբանական որոշում՝ առավելագույնս օգտագործել տարածքը[66]։ Հ. Մարտիրոսյանը, խոսելով Արգիշտիխինիլիի կառույցների մասին, նշում է, որ դարավանդները՝ բիայնական ճարտարապետության հատկանշական գծերից մեկը (ի տարբերություն միջագետքյան ճարտարապետության), սկիզբ են առել Հայաստանի կիկլոպյան ամրոցներից։ Հետաքրքիր է, որ դարավանդների առկայությունը դիտվում է ոչ միայն ամրոցներում, այլև անպաշտպան բնակավայրերում, որը պարզորոշ երևում է Օշականում[67]։

Բիայնական ճարտարապետությունը չէր կարող անտեսել նաև որմնահեցերը, որոնք Հայաստանում հայտնի են մ. թ. ա. III հազարամյակից. օրինակ կարող են ծառայել Հառիճի ամրոցի երրորդ դարավանդի պարիսպների որմնահեցերը[68], Էլառի ամրոցի մուտքի մոտ երկու որմնահեցեր, որոնք նույնպես թվագրվում են վաղ բրոնզի (մ. թ. ա. III հազ.) ժամանակաշրջանով[69]։ Որմնահեցերը շարունակում են գոյատևել հետագա դարերում։ Լճաշենի ուշ բրոնզեդարյան ամրոցի երկու միջնաբերդերը ամրացված են մի քանի տասնյակ որմնահեցերով և անկյունային աշտարակներով[70]։ Այս բոլոր օրինակները խոսում են այն մասին, որ Ջ. Բարնեյի ենթադրությունը հիմնված է Վանի շրջանի միայն իրեն հայտնի որոշ ամրոցների դիտարկումների վրա և հիմք չի կարող ծառայել ամրոցների թվագրությունը որմնահեցերի կամ աշտարակների առկայությամբ կամ բացակայությամբ հաստատելու համար։

Ներքին Խնձորի ամրոցի թվագրությունը ճշտելիս Ջ. Բարնեյը հիշատա-

---

63 C. A. Burney, R. Lawson. Measured Plans of Urartian Fortresses.—Anatolian Studies 10 (196), p. 181—182.

64 C. A. Burney. Op. cit., p. 67.

65 Доклады Н. Марра и И. Орбели, Издание Русского Археологического общества. Пг., 1922, с. 20.

66 К. Л. Оганесян. Архитектура Тейшебаини. Кармир блур IV. Ереван, 1955. с. 69.

67 С. А. Есаян. Об урартских дворцовых комплексах Ошакана.—В сб.. Культурное наследие Востока. Л., 1985, с. 118.

68 Т. С. Хачатрян. Древняя культура Ширака, с. 35.

69 Է. Վ. Խանզադյան. Էլառ-Դարանի. Երևան, 1979, էջ 12։

70 Հ. Հ. Մարտիրոսյան. Ուշ բրոնզեդարյան բնակավայրեր և դամբարանադաշտեր.—Հայաստանի հնագույն հուշարձանները. 2, Երևան, 1966, էջ 16։

կում է տաճարի ներսում գտնված բրոնզե նետասլաքը, որը անվանում է կիմմերական և ենթադրում, որ ամրոցը կործանվել է կիմմերների կողմից մ. թ. ա. VIII դարի վերջում կամ VII դարի սկզբում[71]։ Սակայն այս դեպքում ստացվում է, որ ամրոցը կառուցվել է մ. թ. ա. VIII դարի կեսին, ավերվել 50 տարի հետո, որը հավանական չէ, քանի որ Վանի թագավորության բոլոր մեծ ամրոցները գոյատևել են գրեթե մինչև թագավորության անկումը։ Նշվեց նաև, որ նման նետասլաքները հանգես են եկել մ. թ. ա. VII դարում և հարատևել մինչև մ. թ. ա. VI դարի վերջը։

Չ. Բարնեյը նշում է, որ ամրոցը գրավելուց հետո նրա տարածքում կառուցվել են այլ շինություններ, որոնք երկար չեն գոյատևել, սակայն նա չի նշում ո՞չ շինությունների թվագրությունը, ո՞չ էլ այնտեղ գտնված նյութը։ Եթե նրա այս դիտողությունը ճիշտ է, ապա կարելի է ենթադրել, որ գրանք մ. թ. ա. VI դարի շինություններ պետք է լինեն, ինչպիսիք Վանի թագավորության կործանումից հետո էլ կային Արին բերդում, Օշականում և մի շարք այլ հուշարձաններում։

Թվագրություն փաստարկող միակ նյութը վերոհիշյալ փայլով գավաթն է, որը ս. թ. ա. VIII դարի երկրորդ կեսից հետո հանգես չի գալիս։ Հաշվի առնելով այս գավաթը և վերը նշված ձիու պատկերով անոթի բեկորը (մ. թ. ա. VIII դար) կարելի է ենթադրել, որ Ներքին Խնձոր ամրոցը կառուցվել է մ. թ. ա. VIII դարի երկրորդ կեսից ոչ ուշ և գոյատևել մինչև Վանի թագավորության անկումը։

Ներքին Խնձոր ամրոցի նյութերը լայն զուգահեռներ ունեն Կարմիր բլուրում, Էրեբունիում, Օշականում, Արգիշտիխինիլիում, Ալթին թեփեում, որոնք գոյատևել են մինչև մ. թ. ա. VII դարը։

Սկյութական բրոնզե նետասլաքը վկայում է, որ Ներքին Խնձոր ամրոցը կործանվել է մեդա-սկյութական արշավանքների ժամանակ մ. թ. ա. VII դարի վերջին—VI դարի սկզբին։

КРЕПОСТЬ НЕРКИН ХНДЗОР (КАЯЛИ ДЕРЕ)
(Об урартской крепости в западной армении)

Доктор ист. наук С. А. ЕСАЯН, Л. В. АБАДЖЯН

Резюме

Бнайнийская крепость Неркин Хндзор (Каяли дере) расположена в 16 км к юго-востоку от современного города Варто, на правом берегу реки Арацани. Крепость с двумя цитаделями и городскими кварталами занимает возвышенность и окружающую местность вплоть до реки, охватывая приблизительно 40 га. Раскопки, которые велись группой американских и английских ученых (Ч. Барней, М. ван Лун, Дж. Лойд и др.) в основном на Верхней цитадели, раскрыли развалины храма, дворцовых и жилых помещений, складских комнат и одну гробницу. Богатый материал крепости Неркин Хндзор имеет широкие параллели с бнайнийскими памятниками VIII—VII вв. до н. э. Построенная во второй половине VIII в. до н. э. крепость погибла в конце VII в. до н. э. от мидо-скифского нашествия.

---

[71] C. A. Burney. Op. cit., p. 79